



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՈՐՈՇՈՒՄ № 09Ա

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆԸ  
ԳՈՐԾԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Ռուբեն Վարդապարյանի միջնորդությունը, Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գրիգորի Վարդանյանի համաձայնությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով, 21.2-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

## ՈՐՈՇՈՒՄ Է

1. Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գրիգորի Վարդանյանի՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան գործուղելու ժամկետը երկարաձգել 2018 թվականի մարտի 20-ից՝ 3 ամիս ժամկետով:

2. Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան գործուղված դատավոր Գրիգորի Վարդանյանի անուն-ազգանունը մինչև 2018թ. հունիսի 20-ը ներառյալ հանել գործերի բաշխման ցանկից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018թ. մարտի 17-ից:

**Հայաստանի Հանրապետության  
դատարանների նախագահների  
խորհրդի նախագահ**

2018թ. մարտի 16  
ք. Երևան

**Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**